

ԷԿՈ-ԴԱՍ

ԾԱՌ ՏՆԿԻՐ, ԲԱՐԻՔ ԳՈՐԾԻՐ

Հայ համայնքին կից կիրակնօրյա դպրոցի (ուսուցչուհի՝ Ա. Հովսեփյան, Օ. Մարգարյան) և լրացուցիչ կրթության կենտրոնի (ուսուցչուհի՝ Օ. Մարգարյան) աշակերտներն առաջին «Ժիժի Փի» բարեգործական հիմնադրամի հետ: Հիմնադրամի ներկայացուցիչը Դոնի Ռոստովում Հայ երիտասարդական միությունն է Գևորգ Գրիգորյանի գլխավորությամբ: Հենց նրա ջանքերով էլ կայացավ առաջին ծառատունկը Մեծ Մալախի Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցու բակում: Նախկին ռոստովաբնակ Անահիտ Ղարիբջանն էլ, ով այժմ ապրում և աշխատում է ԱՄՆ-ում, հանդիսացավ այն դուռը, որի շնորհիվ Ռոստովում կյանքի կոչվեց բնապահպանական այս հետաքրքիր ծրագիրը:



ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԱՐՎԵՍԻ ԿՈՄԻՏԵ

Բազմադարյա ու բազմաշերտ հայ մշակույթը, որ եղել է մեր գոյատևման ու ազգային ինքնության ամենախոսուն վկայագիրը, մշտապես ունեցել է նաև այնպիսի նվիրյալ մշակներ, ովքեր սրբել են ժամանակների փոշին փրկելով մեր ոգեղեն գանձերը մոռացության անթափանց մշուշից: Մի Գարեգին Սրվանձության «Մասնա Օներ» սրահների վիպապն էր գրառելու, հանճարեղ Կոմիտասը հայոց երգը, իսկ մի Սրբունի Լիսիցյան իր ողջ կյանքն էր նվիրաբերելու հայոց էթնիկ պարին, ճիշտ այնպես, ինչպես հայ երգի վեհափառը հայկական երգերի պարագայում...



Նրա ճակատագիրը թերևս բոլորովին այլ ընթացք ունենար, եթե թրիսաբակ ծնողները բամախրանքով նայեին ուսման կարևորությանը, եթե չապրեին ու ներծծված չլինեին մշակութային կյանքով, հայրը հայտնի մտավորական, հասարակական գործիչ, մանկավարժ և ազգագրագետ Ստեփան Լիսիցյանն էր, մայրը՝ Եկատերինան, նույնպես մանկավարժ էր, գիմնազիայի հիմնադիր: Նրանք հրատարակում էին «Հասկեր» մանկական հանդեսը, խմբագրում «Տարագ» շաբաթաթերթը գործակցելով հայ մշակույթի երևելիների հետ Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Ալեքսանդր Երրվանդազե, Լազարոս Աղայան, Լևոն Շանթ, Փանոս Թերլևեզյան, Եղիշե Թադևոսյան, այլը:

Օտոնները միջոցներ չեն խնայում, որպեսզի իրենց դուստրը մեկնի Մոսկվա օտար լեզուներ, բանասիրություն ուսանելու և վերադառնա ու շարունակի իրենց հրատարակչական գործը: Գուցեն աղջկա կյանքն այդպես էլ ընթանար, եթե իր սովորելու տարիներին այդքան նորաձև չլինեին աշխարհահռչակ ամերիկոնի Այսեդորա Դունկանն ու նրա պարարվեստը: Այս հրապարակն էլ նրան տանում է Ի. Չերնեցկայայի պարարվեստի ստուդիան: Բոլորն, հունական թեթև զգեստով պարերը հիացնում էին Սրբունին, միայն թե ինքը համոզված էր, որ յուրաքանչյուր շարժում պետք է մտածված և հստակ լինի:

Քսան տարեկանում 1917-ին, վերադառնում է ծննդավայր և նույն թվականին հիմնում ամսուկների, ռիթմի և պլաստիկայի ստուդիան: Կարճ ժամանակ անց ստուդիայի համբավը տարածվում է ամենուր, հասնում անգամ իրեն Այսեդորային, ով, սակայն, ոչ միայն չի հավանում Սրբունու ոճը, այլև չարախնդում է: Մինչդեռ Լիսիցյանի ստուդիան, որն ուներ 100 սան, հիրավի մեծ համբավ էր վայելում, նրանց ելույթները դիտելու էր գալիս նաև ինքի Բոսիֆ Ստալինը: 1924 թ. հայտնու հիմնադրած ստուդիան վերածվում է Թբիլիսիի ռիթմի և պլաստիկայի ինստիտուտի:

1930 թ. Սրբունի Լիսիցյանը տեղափոխվում է մայր հայրենիք: Նույն թվականին նրա ջանքերի շնորհիվ Երևանում բացվում է ռիթմի, պլաստիկայի և ֆիզկուլտուրայի ուսումնարանը: Նա դեկավարում է սովորողների ազգագրական համույթը և ստուդիան: Վեց տարի անց բացվում է պարարվեստի ուսումնարանը, որի առաջին տնօրենը դառնում է ինքը: Այդ նույն շրջանում սկսում է գրի առնել ժողովրդական պարեր և թատերախաղեր:

Սրբունի Լիսիցյանի գործունեության հաջորդ նվաճումը շարժումների գրառման համակարգի ստեղծումն էր: Ուսումնասիրելով մինչ այդ գոյություն ունեցող գրառման համակարգերը, նա վեր է հանում և հաշվի առնում իր նախորդների բոլոր թերացումները, յուրացնում ամենայն արժեքավորը: 1940 թ. Մոսկվայում լույս է տեսնում նրա «Շարժման գրառումը» աշխատությունը: Լիսիցյանական գրառման նորագույն սկզբունքի շնորհիվ երևան են բերվում շարժողական, բառային, երաժշտական, պատկերավորման տեսույթներ, վեր հանվում լեզվաբանական, պատմական, աշխարհագրական շերտերը: Պարարվեստի պատմության մեջ այս ամենն առաջինը կյանքի է կոչվում վաստակաբեռն հայտնու հայտնագործությամբ:

Մեղվազան պարարվեստագետ գրանցել է հայկական ժողովրդական պարեր, թատերայնացված գործողություններ, բեմադրել դրանք, հավաքել ազգագրական և բանահյուսական մեծաքանակ նյութեր, Մ. Բարխուդարյանի համահեղինակությամբ գրել «Նարինե» բալետը, ուսերեն թարգմանել Լևոն Շանթի, Ստեփան Ջորյանի, Դերենիկ Դեմիրճյանի դասական գործերից: Իսկ նրա «Հայկական հինավուրց պարեր» մեծարժեք գիրքը վաղուց ի վեր ուսումնական ձեռնարկ է, առանց որի անհնար է պատկերացնել պարարվեստի ուսումնառությունը համապատասխան և համանուն կրթությանը:

Հակոբ ՄԱՐԳԱՐՅԱՆ



«ԷՋ ԹԻ ՓԻ» հայ — ամերիկյան բարեգործական հիմնադրամի իրականացում է անտառավերականգնման, ծառատնկման և բնապահպանական խոշոր աշխատանքներ: Հիմնադրամի գլխավոր կենտրոնները Հայաստանում են և ԱՄՆ Մասաչուսեթսի նահանգում: Հիմնադրամը Հայաստանում գործում է 1994 թ-ից: Ծրագրի հիմնադիրն ամերիկահայ հասարակական գործիչ Կարոլին Մուզարն է, ով 1992-ին, լինելով Հայաստանում, ականատես էր ցուրտ ու մութ տարիների սոցիալ-տնտեսական խնդիրներին: Խնդիրներից ամենացավալին անտառների մասսայական ոչնչացումն էր: Ծառն օգտագործվում էր որպես վառելիքայտ, որովհետև երկրում այդ տարիներին չկար գազ, էլեկտրաէներգիա: Վերադառնալով Ամերիկա Մուզարը հիմնում է «ԷՋ ԹԻ ՓԻ» բարեգործական հիմնադրամը, որին միանում են սփյուռքի բազմաթիվ բարեգործներ և մեծ ներդրումներ անում: Եվ ահա գործունեության 26 տարիների ընթացքում կազմակերպությունը բազմա-



թիվ բարեգործների, մասնագետների, կամավորների և բնապահպանների օգնությամբ տնկել է մոտ 6 մլն ծառ Հայաստանում և Արցախում, հիմնել է 4 տնկարան, 2 բնապահպանական կրթության կենտրոն Հայաստանի տարբեր մարզերում, կանաչապատել է Հայաստանի և Արցախի 1000-ից ավելի համայնքային տարածքներ:

Կազմակերպությունը ամենամեծ գործատուներից մեկն է Հայաստանում, որն ապահովում է աշխատանքով լեռնային շրջաններում ապրող շատ գյուղաբնակների: Կազմակերպության կարևոր առաքելություններից մեկն էլ բնապահպանական կրթությունն է և շրջակա միջավայրի վերաբերյալ դասընթացները: Դոնի Ռոստովի կիրակնօրյա դպրոցի աշակերտներն առաջինն էին, ովքեր առաջին էկո-դասի մասնակիցը դարձան: Ծառապահպանման, ծառատնկման, ծառերի կենսական անհրաժեշտության, օգտակարության, ծառ աճեցնելու, խնամելու երկար գործընթացի մասին պատմող այս դասը մեծ ոգևորություն առաջացրեց նույնիսկ ամենափոքր մասնակցի մոտ: 4 տարեկան Աշոտը արդեն գիտեր, թե ինչի համար են ծառերը և ինչպես խնամել դրանք: Երեխաները սիրով ծանոթացան Հայաստանում աճող ծառատեսակներին, անուշահամ մրգերին ու էկոլոգիական խնդիրներին: Կազմակերպության հայաստանյան գրասենյակը բոլոր մասնակիցներին ուղարկել էր «ԷՋ ԹԻ ՓԻ»-ի խորհրդանիշով շապիկներ, ճանաչողական-ուսուցողական գրքեր: Բացի այդ, երեխաներին բաժանվեցին նաև սոճու սերմեր, որոնք հատուկ խնամքից հետո



պետք է դառնան ծառեր: Իսկ աշխարհ երեխաները պետք է մասնակցեն ծառատնկի կանաչապատելով Դոնի Ռոստովում գործող հայկական եկեղեցիների տարածքները:

Հաջորդ էկո-դասի մասնակիցները լրացուցիչ կրթության հայերենի «Արևիկ» խմբակի սաներն էին: «Անհավանական մեղուները» խորագրին էր կրում հերթական բաց դասը, որը նույնպես շոշափում էր բնապահպանական խնդիրներ:



Մեր փոքրիկ մեղվիկները ներկաներին պատմեցին մեղունների գործունեության, կյանքի, նրանց աշխատասիրության և մեղրի օգտակարության մասին:

Երգ, պար, հյուրասիրություն, ծիծաղ ու ժպտացող աչքերով մանուկներ... ահա հերթական կայացած դասի հաջողությունը: Հրավիրված ծնողներն ու հյուրերը սիրով մասնակցեցին հյուրասիրությանը, վայելեցին անուշահամ մեղր, ուրախացան երեխաների հետ և ստացան նոր գիտելիքներ:

Գարծում են, որ համագործակցությունը կազմակերպության հետ հաջողվել է և շարունակական կլինի:

Շնորհակալություն ռոստովյան ներկայացուցիչ Գևորգ Գրիգորյանին, ամերիկահայ Անահիտ Ղարիբջանին և հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչներին:

Շովիտար ՄԱՐԳԱՐՅԱՆ, ուսուցչուհի